

ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ

ԸՆԴԴԵՄ ՊԱՎԼԻԿՅԱՆՆԵՐԻ

Եթե դեռ Քրիստոսի մարմնանալու սկզբից իսկ Հովհաննես ավետարանչին պատշաճ էր իր ընդհանրական թղթում ասել, թե «Բազում նեռեր են աշխարհ եկել, որով կարող ենք իմանալ, թե վերջին ժամանակներն են», ապա էլ մենք ի՞նչ ասենք, որ ոչ միայն ավելի չար ու բազմաթիվ նեռեր ենք բերում մեզ հետ, այլև, իսկապես, ահա, հասել ենք ժամանակի վերջին. արդարև սուտ քարոզիչներ ու վկաներ են ելել,—ես մեր ժամանակների մասին եմ ասում և ժամանակիս մարդկանց: Գտնվեց, ահա, մի որոգայթ, որը, իբրև թռչնորսի ցանց, գցվեց իր ազգի ժողովրդի մեջ՝ բռնելու տրխմար ու պարզամիտ մարդկանց, որոնք չարիքից չարիք ելնելով՝ պատկերամարտությունից անցան խաչամարտության ու քրիստոսատյացության, այնտեղից էլ՝ անաստվածության և դիվապաշտության: Այլև խորամանկությամբ չարության իրենց սպանիչ զենք դարձրին քրիստոսասեր հոգիներին և, դաշնակցելով թլփատված բրոնակալների հետ, նրանց ստվերագիր և առասպելապատում մատյանների հմուտ օգտագործմամբ՝ համբակներին ներգրավեցին իրենց բազմության մեջ: Եվ եթե ոմանց՝ համառությունից ախորժելի էր բարեկամությունը բանարկուի հետ, ապա զարմանալի ոչինչ չկա, որ ոմանք էլ համախոհ լինելով մտերմանային նրա արբանյակներին: Սրանք են, ահա, որ իրենց ահոռ շուրթերով հանդգնում են նախատել մեզ՝ կռապաշտներ անվանելով՝ մեր ուղիղ, աստվածավանդ ու լուսավոր կրոնի և տերունական նշանի պաշտամունքի պատճառով, հոչակելի այն նշանի, որն ընդունել ենք անընկլուղորեն, անդրդվելի մտքով, ամեն մի նյութ կապելով նրա հետ, մի նշան, որ սարսափելի և պատկառելի է նույնիսկ քերովբեների համար, բուժիչն է մեր հոգեկան ու մարմնական ախտերի և որից սարսում ու զարհուրում են դևերը: Անհավատության դևից հիմարացած այդ խելագարները անամոթաբար պախարակում են մեզ՝ Աստծո մարդացած Բանի պատկերը կենդանագրելու պատճառով, հակադրելով մեզ սուրբ մարգարեների այն խոսքերը, որ, իբրև հանդիմանություն, ասված են հեթանոսական կռամոլության մասին: Այդ խավարամիտները չեն կարող տեսնել այն տարբերությունը, որ կա մեր աստվածապաշտության և հեթանոսական բազմաստվածության միջև. մենք մեկ Աստծո Միածին Որդու պատկերն ենք պաշտում և նրա հաղթության նշանը, մինչդեռ հեթանոսներին անհուն ու անթիվ պաշտամունքներով մոլորեցրեց սատանան: Հեթանոսներից ոմանք խաբվեցին, հետևելով աչքի տեսածին: Նրանք երկնքի և երկրի տարրերից ինչ որ առերևույթ միանգամայն գեղեցիկ էր՝ աստղերը, լեռները, բլուրները, ծառերը, քարերը՝ աստվածներ անվանեցին: Ոմանք էլ կենդանիների ուժից ու դաժանությունից վախեցած ու ահաբեկված՝ սկսեցին պաշտել նրանց և աստվածներ անվանեցին, ինչպես բաբելացիները՝ վիշապին, եգիպտացիները՝ կոկորդիլոսին: Իսկ ովքեր էլ չափից դուրս

տարվեցին իրենց վավաշոտ ախտի մտահոգությամբ՝ ստեղծեցին արական և իգական անդամների նմանաձև արձաններ և պաշտեցին, ինչպես մովաբացիները և սիդոնացիները՝ Քամոսին և Աստարտեսին: Ուրիշներն էլ կան, որ ընտրելով կյանքի համար օգտակար և պիտանի տարրերը՝ աստվածացրին նրանց, ինչպես պարսիկներն ու մարերը՝ և՛ հուրը, և՛ ջուրը, և՛ երկիրը: Դա նույնիսկ այն աստիճանի հասնում էր նրանց, որ մեռնելուց հետո իրենց մարմինները թողնում են, որ ուտեն գազաններն ու թռչունները, բան թե թաղեն հողում և նեխությամբ անպատվեն երկիրը, որին պաշտում են հիմարորեն: Ոմանք էլ տեսնելով արյուն ու թարախ ծծող կենդանի էակներ, իրրև ախտեր բուժողների և ցավեր հալածողների՝ մեծարելով՝ անվանեցին աստվածներ, ինչպես գազացիները և ակկարոնացիները՝ տզրուկներին, ճանճերին և մժեղներին:

Հեթանոսների մի մասն էլ պատվում ու պաշտում են այն կենդանիները, որոնք վնասակար գազաններից պաշտպանվելու մեջ սպասարկու օգնություն են ցույց տալիս իրենց տերերին: Այսպես. հյուսիսային (ցեղերը պաշտում են) ձին և շունը, մեկին՝ արագաշարժության համար, որն իր ոտքերով, ասես թևերով, թռցնում է հեծյալին, տանում, ուր փափագում է հասնել, մյուսին՝ տիրոջը գազանների հափշտակությունից ապահով պահելու համար: Խոսքս վերաբերվում է նաև նրանց, որոնց մոտ մեծարգի է կատվապաշտությունը. կատուն պաշտում են իրենց կերակուրները ապականողներին՝ մկներին, կերակուր դարձնելու պատճառով:

Հեթանոսների մոտ, աստվածից բացի, ամենից ամբարիշտն այն էր, որ ստեղծվեց մարդու անձի պաշտամունք և երկրպագություն: Ով աստվածության կասկածանքով մոլորվում էր ընկերներից՝ խոնարհվելով, հիմարաբար երկրպագում էր ինքն իրեն: Համեմատվելով ուրիշների հետ և տեսնելով, որ ինքը փոքր ու նվազ է ընկերոջից՝ գերազանցողին դնում էր արարչի աստիճանի, իսկ իրեն՝ խելագարությամբ՝ խոստովանում արարած: Այսպես վարվեցին, ահա, քաղդեացիները, որոնք տեսնելով վիթխարի և հուժկու այն տիտանին, որի հասակի երկարությունը վաթսուն կանգուն էր, իսկ լայնությունը՝ վեց, դրա համար էլ նրան՝ իր վիթխարի կազմվածքի պատճառով, պատիվ տվին ու պաշտեցին որպես աստծու: Սրա չար պաշտամունքի խավարը պատեց ամենուր, կուրացրեց բոլոր երկրները՝ ըստ յուրաքանչյուր լեզվի այլափոխվելով անունը. քուշացիները նրան կոչում են Նեբրովթ, բաբելացիները՝ Բել, փոշտացիները՝ Բահալ, հելլենացիները՝ Դիոս, պարսիկները՝ Որմիզդ, հայերը՝ Արամազդ:

Եվ ինչպես խաբվեցին սրա հասակի բարձրությունից ապշելով, այնպես էլ զարմանալով ուրիշների սրտահաճ այլ հատկանիշներով խաբվելով՝ նրանց էլ աստվածներ անվանեցին. Կրոնոսին, օրինակ, պատերազմասիրության և համարձակ հարձակման համար, Արեսին՝ քաջարիության, Հերմեսին՝ կորովի ճարտասանության, Զևսին՝ անհաղթահարելի հակառակորդների հետ զուգախառնության, ոմանց էլ բարեբաստիկ բնական այլ հատկությունների համար: Քանդակելով այդպիսիների պատկերաձև կուռքերը, նրանց ևս աստվածներ անվանեցին: Եվ քանի որ այդ գարշ պիղծերի ու վատթարագործների անուններով կուռքեր էին կանգնեցրել, չարասեր ու ճշմարտատյաց դևը դարանում էր նրանց մեջ մտնելով և տեսանելի արձանների միջոցով դեպի իրեն էր քաշում կռապաշտներին՝ ընդունելով նրանց երկրրպագությունը: Դրանից էլ երևան եկան ոչ միայն դիցերի երկրպագու տարրապաշտները, այլև դիվապաշտները, որոնք ոչ միայն վերցրին դևերի այդ պաշտամունքը, այլև իրենց հերթին սկսեցին ծառայել նրանց: Եվ ոչ միայն դիվաբնակ ու դիվաշունչ կուռքերի սպասավորներ դարձան, այլև դյուցազիններ անվանելով՝ նրանք վեր էին դասում մարդկային բնությունից:

Արդ, կռապաշտների բացահայտորեն բողարկված այս հիմարությունը մերկացնելուց հետո, այլևս ոչ մի հարկ չկա նրանց ինչ-որ նոր անուն տալ, որովհետև ակներևորեն իրին համապատասխան անունը կարիք չունի ուրիշ անվանակոչության: Արեգակին երկրպագելով՝ նրանից էլ լծորդվում է երկրպագուների անունը (արևապաշտներ), մկնորս կենդանիներից՝ նրանց պաշտողների անվանումը (մկնապաշտներ), իսկ ովքեր ձին ու շունն ընտրելով՝ նրանց դարձրին իրենց աստվածներ, թող նրանցից էլ մղված ընկնեն խորխորատ, իսկ եգիպտացիներից էլ (նրանք, ովքեր կոկորդիլոս են պաշտում)՝ թող ընկղմվեն գազանասույց գետը: Խավարում կատարվող այդ խավարային գործերից խոհերս վտանգի ենթարկելով՝ պարսկական մայրապականությունից անցնում են նույն Քամոսի և Աստարտեսի գարշելի կուռքերին, որոնց աղոթում են ոմանք: Հանեսի և Համրեսի հետ, ոմանք գեհենի հրի ցայտքեր ժայթքող կայծակնառաք դևին բարեբանողներ լինելով, խոնարհվում ու երկրպագում են Ոլիմպիոս լեռան գետնաթավալ և փրփրե-

բախ դևին: Երեխաների արյամբ զանգելով ալյուրը, լափում են անիրավորեն՝ օրենք համարելով այն, ինչ վատթար է նույնիսկ խոզերի անզգա ծննդակերությունից: Ոմանք էլ դիակները հանում են երդիկներով, դնում տանիքներին և, հայացքները դեպի վեր, երկնապիշ եղած, այլևայլ խոսքեր ասելով երդվում, թե՝ Բարձրյալը գիտե: Արեգակին աղոթելիս կեղծավորաբար Արեվիկ, Լուսիկ են ասում, իսկ ծածուկ՝ Մանիի և կախարդ Սիմոնի մոլորությունների համաձայն կանչում օդային և լուսնոտ դևերին: Դրա պես և այն ասված է, թե ինչպես առաջնածին կնոջ մանուկը վերցնելով՝ իրար ձեռքից ձեռք են ձգում՝ տանջամահ անելով և ում ձեռքին երեխան շնչասպառ ավանդում է հոգին, նրան աղանդապետի կարգ են տալիս և մեծարում: Հետո խարդախամիտ երդումներ են տալիս նրա անունով. Երդվում եմ, ասում են, Միածին Որդուն, կամ թե՝ Ես վկա եմ ի փառս նրա, ում ձեռքին իր հոգին ավանդեց Միածին Որդին:

Ահա այսպիսի զանազան խաբկանքի խոսքերով ծածկում են իրենց հոգիները և հնարք գտնում՝ հավատացյալներից տգետներին քաշելով դեպի իրենց: Եվ ինչպես գորտերը, որոնք իրենց մարմնի անդամները սուզելով լճերում՝ բերանները դեպի դուրս ձայն են արձակում՝ լիովին հայտնի լինելով և մնալով անհայտ, այդպես էլ ասածս մարդիկ են, տղմասեր ու չարագործ, որոնք միմյանց մոտ անպատկառ ձևով պղծության են դիմում, իսկ մեզ մոտ սխալավրեպ ու պատրող խոսքերով ձևանում անգետ: Նրանք չգիտեն, թե ինչպես անկարելի է ծածկել հոտի բուրմունքը, որ ինքն իրեն է հասնում հոտոտելիքին, այդպես էլ անհնարին է թաքցնել այն գործերը, որոնց համբավը հողմով գալիս ու դիպչում է շատերի լսելիքներին: Բայց և դըժվար է ամեն ինչ իմանալ այն բազմազան ու խուռն չարության մասին, որ անտառի պես աճել է նրանց մեջ, որովհետև բացահայտ սատանայական այդ ուսմունքը միավորվելով մի տեղ՝ նրանց ամբարշտության հեղեղներից դարձավ ծով:

Ներսես կաթողիկոսի կողմից խրատված, բայց խելքի չեկած նախկին մծղնե աղանդի պավլիկյան բեկորները կաթողիկոսի մահից հետո խույս տալով թաքնվեցին մեր աշխարհի տարբեր շրջաններում: Պատկերամարտներից ոմանք էլ, որոնք կշտամբանքների էին ենթարկվել Աղվանքի կաթողիկոսներից, գաղթելով եկան և հարեցին նրանց, քանի որ՝ ով շեղվում է ճշմարտությունից, սիրում է հասնել իր նմաններին: Եվ քանի դեռ նրանք դերաքրիստոսի կարապետներին իրենց զորավիգ չէին գտել, վախենում ու սարսում էին քրիստոսականների ուղիղ և գերապանծ կրոնից, մանավանդ որ անզգամը, իր մտքերից տանջվելով, դատապարտում է ինքն իրեն: Իսկ երբ երևաց հնացած ու աղոտ այս [մահմեդական] կրոնը, կարծեցին, ինչ-որ մեծագույն մի բան է դա, այն ժամանակ դուրս սողալով իրենց դարանամուտ որջերից՝ համարձակվեցին հարձակվել միջնաշխարհի և ժողովրդաբնակ վայրերի վրա՝ իրենց մաս հասած հեղեղահոս ու հեղձուցիչ ջրերի այն վայրից, որ կոչվում է Զրկա: Ամեն տեղից միասին գնալով մի տեղ, կուտակվեցին, ինչպես տարբեր վայրերի անգրղները՝ նեխաշաղիղ լեշի վրա և իրենց անվան աղտեղությունը հանդգնեցին փաթաթել նաև այն մարդկանց, որոնք հույսով ձեռք են մեկնել երկնային բարիքներին: Ընտրյալ և աստվածային բնակության արժանավոր մարդկանց, որոնք երկրում երկրային ների վարքով են առաջնորդվում, այնքան են անզգա դարձել դևի հայհոյությունից, որ նույնիսկ այդպիսիներին անամոթաբար հանդգնում են փոխել իրենց ամբարշտության մաղձով՝ կռապաշտներ ասելով նրանց:

Ես չեմ նվաստանում, բարեպաշտորեն լսելով այդ խոսքերը, որոնցով փորձում են նախատել մեզ, որովհետև մենք արդարև կռում, կոփում, քանդակում և քերում ենք այն ամենը, որոնցով կատարում ենք մեր աստվածապաշտության կարգը՝ եկեղեցիները, սեղանները, խաչերը, պատկերները: Բայց մենք դրանք չէ, որ պաշտում ենք՝ համապաշտամունք լինելով հեթանոսներին: Նրանց մեհյանները շինվել են որպես կուռքերի ընդունարաններ, մինչդեռ եկեղեցիներն այն բարեպաշտների աղոթքների ու խնդրվածքների տաճարներն են ու ժողովարանները, ովքեր կամենում են մերձենալ Աստծուն: Դրա համար էլ Աստծո տաճարը և կուռքերի մեհյանները, ինչպես և Պողոսն է ասում, խիստ տարբեր են միմյանցից: Ձեռակերտ կուռքերը, ինչպես սկզբում ասացի, քանդակվել են հիմք ընդունելով որևէ ախտ, և յուրաքանչյուր ախտի դև, մարմնանալով կուռքի մեջ, մեհյանը դարձնում է իր կուռքի բնակարանը: Սա նկատի ունի մարգարեն, երբ ասում է, թե «Հեթանոսների բոլոր կուռքերը դևեր են»՝ բարկության դև է կամ ագահության, կամ՝ ագանության, կամ՝ պոռնկության: Մինչդեռ եկեղեցիները շինվել են հավատացյալների աստվածասիրության փափագով. դրա համար էլ Աստված ինքն է դադարում այնտեղ և նրանց մեջ, իրար դասակցելով, պարում են երկնային զվարթունների դա-

սերը, քանի որ, ամենայն իրավամբ, ուր հայտնվում է Աստված, մենք ընդունում ենք, որ նրա սպասավորության համար շուրջը կանգնած է հրեշտակների բազմությունը:

Այնուհետև. կռապաշտները մահացածներից ոմանց նմանությունը կերպագծելով դրոշմում են անշունչ նյութերի մեջ, և այդ պատճառով էլ պատկերագործն ինքն էլ ոչ մի հույս չի կապում ոչ նախատիպի և ոչ էլ նրա պատկերի հետ: Մինչդեռ ամեն մի նյութի մեջ մենք մարդակերպ նմանությամբ պատկերում ենք կենդանի և կենդանարար Քրիստոսին և դրա համար էլ հաստատուն է մեր հույսը, քանի որ, ինչպես ինքն ասաց «Նա, ով հավատում է ինձ՝ մահ չի տեսնի, եթե մեռնի էլ, պիտի կենդանի լինի»: Եվ ինչպես Եսային է ասում՝ պիտի ասեն. «Տեր Աստված Իսրայելի, երկրի ծագերից լսեցինք հրաշքներդ, հույս բարեպաշտի. թող իմ խորհուրդն ինձ և իմոնց լինի»: Այսինքն՝ արհեստի ձեռակերտին չէ, որ ներկայացվում է առաջիկա հույսի խորհուրդի երաշխիքը թե իր և թե յուրայինների համար: Իսկ կուռքերի մասին ասում է, թե «Նրանց նման կլինեն նրանց շինողները և բոլոր նրանց հուսացողները»: Եվ թե՝ «Թող ամաչեն բոլոր նրանք, ովքեր երկրպագում են կուռքերին և ովքեր պարծենում են իրենց քանդակված կուռքերով»: Նրանցից ամենաչար դևերը՝ ըստ յուրաքանչյուրի մեջ մարմնավորված ախտի, պահանջում են, որ կատարվի համապատասխան պաշտամունք: Այսպես, ահա, պոռնկության դևի մասին գրված է, թե «Բելփեգովը մտան և մերկացան իրենց ամոթից և գարշելի կուռքերը դարձան նրանց սիրեցյալները»: Սպանության դևի համար ասում է, «Իրենց ուստերին և դուստրերին զոհեցին դևերին և անմեղ արյուն թափեցին»: Հարբեցողության դևի վերաբերյալ էլ ասում է. «Նրանց մեջ կենդանացավ ու կաթեց գինու և հարբեցողության մոլորության դևը»: Տարրասիրության դևը ստիպում է իր հնազանդներին երկրպագել պատահած բարեձև և գեղեցկատես տարրերին: Այդպես սովորեցին կարկանդակներ շինել երկնքի տիկնոջ համար և նվերներ ընծայել արեգակին: Նմանապես նա սովորեցնում էր, որ երկրում փայտին կանչեն՝ «Դու իմ հայրն ես», քարին, թե՝ «Դու ես մեզ ծնել», և հրամայում էր զոհեր մատուցել լեռների և բլուրների վրա, կաղնիների ու կաղամախիների և տերևշուք ծառերի ներքո: Իսկ մեզնից ի՞նչ է հայցում մեր տեր Աստվածը. «Միայն իրավունք անել և արդարություն գործել» և «Չարի փոխարեն չար չհատուցել, այլ չարին հաղթել բարությամբ» և թե՝ «Խաղաղություն արեք և խաղաղության Աստվածը պիտի ձեզ հետ լինի»: Այսպիսի և սրանց նման սիրելիներ լինել հրամայեց մեզ Աստված, ինչ ատելի է նրանց համար՝ դևերի հրամանով, որովհետև ինչ միանգամայն մերժելի է մեզ համար, մեծարելի է նրանց համար: Որովհետև սկզբնաչար և մարդատյաց դևերը կամենում են չարչարանքների ու նեղությունների մեջ տեսնել ոչ միայն նրանց, ովքեր իրենցը չեն, այլև իրենց պաշտողներին են գրգռում չարագործությամբ ու վնասարարությամբ հարձակվելու իրար դեմ: Դա էլ տեսնում ենք, թե ովքեր են ծառայություն մատուցում սատանային՝ խեղանդամներ, հոգեհաշմանդամներ, հյուծվածներ, այլանդակներ և ուժից ընկածներ: Իսկ մեր մարդասեր և բարերար Տերը ոչ միայն ողջանդամներին չի նախանձում առողջության համար, քանի որ հենց նրա կողմից են այդպես եղել ու պահպանվել, այլև բժշկության դեղեր է տալիս ախտաժետներին:

Լինելով մարմնավոր և նրա կապանքներով կապված՝ մենք չէինք կարող խառնվել հրեշտակներին և բացահայտորեն տեսնել Արարչի մեծությունը, ինչ քերովբեներին է միայն տեսանելի, մինչդեռ մեր բանականությունը միշտ ձգտում է մտքի տեսողությամբ հասու լինել գերագույն և առաջին պատճառին, ուստի միտքը հածելով զգայական երևույթների և իրերի մեջ՝ ընկնում է նրանց թակարդը և ստիպված՝ իր որոնածը ընտրում է նրանցից: Եվ քանի որ իր կամքով էլ վերցնում է նրա կերտման նյութը և պատվում, տիրական է դարձնում այն, այնուհետև չանք չի խնայում նրան հոչակել արարիչ, իրեն՝ սպասավոր: Այս ձևով մոլորվեցին մարդիկ, զանց առնելով մեկ աստվածության իշխանությունը և ծառայելով բազմաստվածության իշխանությանը, այստեղից էլ մեկ աստծու կերպարի փոխարեն ծագեցին այն տգեղ և այլակերպ ձևերը, որոնք դրսևորում են մարդկային բազում ախտերի և ցանկասիրությունների շաղախները: Եվ դա այնքան ժամանակ, մինչև ստեղծողը գթալով իր պատկերին՝ դարձավ ստեղծվածի պատկեր, և նա, որ սկզբից իսկ մարդուն արարել էր ըստ իր պատկերի և նմանության՝ ինքը եկավ, և այս վերջին ժամանակս ծառայի կերպարանք առավ և լինելով մարդու նմանությամբ՝ եղավ մարդու կերպարանքով, որպեսզի այս միջոցով իր ստեղծած պատկերը մեկ անգամ էլ զարդարի գեղեցկությամբ՝ ըստ նրա առաջին աստվածատիպ նմանության: Եվ սրա համար է, որ մեզ ուսուցանեց պաշտել Աստուծո մարմնացած Բանին՝ մարդկային կենդանագրված պատկերի ձևով և նրա հաղթության պատվա-

կան նշանը՝ խաչի ձևով: Դրանց երկրպագելով՝ չեմ երկմտում, թե ինքնին բազմած այդ իրերին ես Քրիստոսի երկրպագություն եմ մատուցում. ավելի շատ ոչ թե տեսանելի երևացողին եմ նայում, այլ մտածում եմ նրա մեջ գանձված անտեսանելիի մասին: Թեև նյութը կարող է լինել այլազան և տարատեսակ, բայց ես յուրաքանչյուրի մեջ տեսնում եմ նույն զորությունը: Երբ քարից կամ ոսկուց պատրաստված խաչ կամ պատկեր եմ տեսնում, մի՞թե ես իմ հույսը քարի կամ ոսկու վրա եմ դնում: Այդպես են վարվում նրանք, ովքեր, ինչպես մարգարեն է ասում, «Շնանում էին քարի և փայտի հետ» և որոնց մասին Դավիթն ասում է, թե «Հեթանոսների կուռքերը արծաթ ու ոսկի են»: Իսկ մենք տարբեր նյութերից անջատելով պատվում ենք միայն այն նյութերը, որոնց վրա պատկերում ենք Քրիստոսին կամ նրա խաչը: Անունն ու նմանությունն էլ անհրաժեշտ են դարձնում երկու բան. Քրիստոսին բնակեցված տեսնել այդ պատկերների մեջ, մեզ էլ՝ աներկբա արտով մեծարել նրանց: Եվ ոչ միայն այս. քահանայական խոսքը և ձեռքն էլ Սուրբ Երրորդության զորությունն է բնակված համարում նրանց մեջ, նրանց շնորհիվ են մարդկանց պարգևներ հասնում կամ պատուհասներ, նրանցով են փակվում կամ բացվում երկնքի դռները, նրանց են, որ տեղի տալով՝ հնազանդվում են բոլոր տարրերը:

Իսկ ի՞նչն եմ քահանայական խոսք ու ձեռք կոչում. այն, ինչ Սուրբ Հոգու նույն առհավատչյան է նաև վստահեցնում. ոմանց մերձենալ ու ապավինել իբրև բարձրագույն և աստվածաբնակ նյութերի: Ես սուրբ յուղի հեղման մասին եմ ասում, որով, նախկինում, աստվածային Հոգին անցնում էր քահանաներին և թագավորներին, ներգործում նրանց վրա: Եվ ամենուրեք բոլորի մոտ էլ այս յուղով պարգևաբաշխ Հոգին գտնում է իր կատարյալ խորհուրդը: Միշտ այնպես, ինչպես մեր մարդկային բնությունն է երկու տեսակ, այդպես էլ երկպատիկ ու նորոգող Սուրբ Հոգին է մերձենում մեզ. նյութականությամբ զվարճացնում է զգայականը, քանի որ «Յուղը,—ասում է մարգարեն,—զվարթացնում է», իսկ իր զորությամբ զորացնում է մեր հոգեկանը, «Հրամայիր,—ասում է,—Աստված քո զորությանը զորացնել այն, ինչ հաստատեցիր մեր մեջ»: Եվ որպեսզի որևէ մեկին կասկածելի չթվա իր գործի իրողությունը, սկզբից մարմնավոր տեսքով եկավ հանգչելու իր ազգակցի վրա, կամենալով այդպես երևալով աշխարհին առհավատչյա լինել իր աներևույթ գալստյան համար, իսկ աշխարհը չկամեցավ աչքի տեսածը դարձնել սրտի տեսողության ճանապարհ: Սա հենց այն է, ինչ Տերն ասում էր, թե «Աշխարհը չի կարող ընդունել նրան, որովհետև չի տեսնում և չի ճանաչում նրան, բայց դուք տեսնում եք, որովհետև ձեր մոտ է բնակվում»:

Այդպես էլ, ահավասիկ, մենք՝ առաքյալների խոսքով Ամենասուրբ Երրորդության հավատացյալներս, ընդունում ենք, որ փրկագործության միջոցները՝ եկեղեցիները, սեղանները, խաչերը, պատկերները, օծված են յուղով, և հավատում ենք, որ նրա հետ այդ միջոցներին է անցել աստվածային զորությունը: Սրանցով էլ նրանք տարբերվում են նույնատեսակ մյուս բոլոր նյութերից, իսկ մենք կռապաշտներից սահմանազատվում ենք նրանով, որ նրանք ամբողջ նյութն են աստվածության տեղ ընդունում և խաբվելով՝ գրավվում: Մեր խոսքի ճշմարտության վկայություն կարող է լինել այն, որ մարդկանց մոտ նրանց միջոցով են կատարվել զորություններն ու հրաշքները, նրանցից են սարսել ու փախստական եղել դևերը: Ըստ գրածի՝ թե «Քո հավատացյալներին նշան տվեցիր, որպեսզի փրկվեն աղեղներից», որ ավելի պատշաճ էր անհավատներին ապշահար անելու և հավատին հրելու համար, քան մեզ, որովհետև «Նշանները,—ասում է առաքյալը,—անհավատների համար են և ոչ թե հավատացյալների»: Անշունչ նյութերը չէին կարող կենդանի մարդկանց օգնության շնորհ մատուցել, եթե Աստված բնակված չլիներ նրանց մեջ:

Եվ տարակուսանքով մի գայթիր նրա լռելու և ոչ թե իրեն հայհոյողներին և թշնամանողներին ջատմամբ չհարվածելու համար, քանի որ Աստված հավասարապես վարվում է երկու ձևով՝ համբերամտությամբ և վրեժխնդրությամբ: Ամեն տեղ, ամեն ժամանակ և ամենքի դեմ չէ, որ նա վարվում է այդ երկու կամ դրանցից այս կամ այն ձևով, այլ տեղ կա, ժամանակ, երբ նա վարվում է մեկ այս, մեկ այլ ձևով, երբեմն էլ՝ այնպես, ինչպես հարմար է գտնում աստվածային կանխատեսությունը: Եվ ոչ էլ անհավատության մտքերով ցած գլորված՝ համառիր, թե իբր անհնարին է, որ Աստված լինի իր ստեղծած գոյացություններից ամեն մեկի մեջ. «Ինձնով,—ասում է,—լցված են երկինքն ու երկիրը» և թե՝ «Նրա փառքով է լցված ողջ երկիրը», այլև կարող է միայն նրանց ներգործությամբ տնօրինել, դրանցից որով կամենա ինքը և ինչ պահանջի ժամանակը:

Մովսեսը գավազանով ճեղքեց ծովը, ա-

մուլ բարից գետ հոսեցրեց. այդ հրաշագործությունը մենք վերագրում ենք ոչ թե անզգա փայտին, այլ նրա մեջ պարփակված աստվածային շնորհներին: Տապանակը կանգնեցրեց Հորդանան գետը, Եղիայի վերարկուն բաժանեց նույն գետը: Երիքովի պարիսպները կործանվեցին տապանակից, նրանից մեռավ Ոզան՝ փորձելով տկար ուժով օգնելու ամենազորին, նա էր, որ հարվածեց այլազգիների հետույքներին ու սրունքներին, նա էր, որ մեհյանի մեջ ցած տապալեց և փշուր-փշուր ցրեց Դագոնի կուռքը՝ աստվածապաշտության շավիղը ցույց տալով կռապաշտներին: Մի՞թե քարերից կոփված տախտակներն էին անում այս բոլորը, և ոչ թե ինքն Աստված, որ միավորված էր նրանց և ժամանակին էլ դա էր պահանջվում:

Արդ, քանի որ թե հին և թե նոր ժամանակ երևաց, որ Աստծո կամքն է լինել անշունչ նյութերի մեջ և նրանց միջոցով օգտակարության պետքեր մատակարարել մարդկանց, ցույց տանք նաև այն, որ մեզ համար պատվելի և պաշտելի են այնպիսի նյութերը, որոնց մեջ Աստված կլինի: Բայց խոսքի որսորդ հակառակորդները թող նենգությամբ չհարձակվեն այս պարզ ասված խոսքերիս վրա, թե, իբր, Աստված ամենուրեք է, թե, իբր, բոլոր գոյերը պաշտելի են, թե, ուրեմն, ճիշտ է, որ մենք, իբր, Արարչի փոխարեն պաշտում ենք արարածներին: Քավ լիցի: Ընդհանուր նյութերից մենք միայն նրանք ենք պաշտում, որոնք, իբրև գործիք՝ Աստված առնում է ձեռքը և բարերարության իր խնամքները նրանց միջոցով ներհեղում մեր մեջ: Բազմաթիվ էին Բաբելոնում ոսկե և արծաթե պատվական անոթները, սակայն աստվածային անոթների պատճառով միայն պատուհասի ենթարկվեց Բաղդասար արքան. բազմաթիվ ոսկեզօծ արկղներ կային շինված նաև Դավթի ժամանակ, սակայն Դավթի կաքավելն ու նվագելը եղել է միայն Աստծո տապանակի առջև: Պակաս գեղեցկակերտ տաճարներ չկային Սողոմոնի ժամանակ՝ տարբեր տեղերում, բայց Իսրայելի ժողովուրդը բոլոր վայրերից հավաքվում և նրա շինած տաճարում էին աղոթում Աստծուն: Ըստ այսմ էլ՝ Տերը հանդիմանում և սաստում էր նրանց, ովքեր անպատվելով պարունակողը՝ տաճարն ու սեղանը, պատվում էին հատկապես նրանց պարունակածը՝ զոհը և ոսկին: «Ով ընդունվածների վրա է երդվում,—ասում է Տերը,—նա երդվում է նրանց ընդունողներին»: Նույնն էլ մեզ է հարմար ասել. ով պատվում է Քրիստոսի խաչը և նրա պատկերը, նա էլ պատվում է Քրիստոսին, նմանապես ով թշնամանում է նրանց, թշնամանողն էլ մեղավոր է ճանաչվում Քրիստոսի կողմից:

Խոսքս, սակայն, առաջ ընկնելով այն պատճառով այսքան երկարեց, որպեսզի պապանձեցներ լեզվագետների այն ավելորդաբանությունները, որոնք ծամածռելով և խաթարելով մեր մտքերը, մեզ կռապաշտ են համարում: Նրանց մասին պետք է ասել, «Ով անհավատ է, անօրինություն է գործում», «Բայց դուք ելեք նրանց միջից և զատվեցեք և մի մերձեցեք պիղծ բաներին», որովհետև «Ամեն մի տունկ, որ Աստված չի տնկել, պիտի արմատախիլ արվի»:

Ուստի հրավեր կարդալով ձեզ՝ բռնենք բարձրագույն և ամենազոր Աստծո բազկից, որն էլ ունակ է խարշելու, մեղելու և դուրս նետելու հեթանոսական այդ բույսը իբրև ագարակի փշեր և նրանց դադարման տեղը դարձնելու երկրի գազանների և երկնքի թռչունների բնակավայր:

Արդ, նույն ամենազոր բազուկը մեզ կոչում է առաջ՝ ընդդեմ կանգնելու միմյանց դեմ մարտնչող այլազգիների երկու կողմերի գնդերին, որոնք ամբարտավանությամբ մարտահրավեր են նետում մեզ՝ ինչպես մի ժամանակ Գեթացին՝ Դավթին: Այլև օձի իրենց լեզուները սրի պես սրելով՝ սպառնում են սպանել կենդանի այն հավատը, որ մեր մեջ է և թռչունների պես դյուրադարձ ճախրելով և գազանների նման հոխորտալով ձգտում են այն գիշատել ու պատառոտել: Դրա համար էլ եկեք և մենք աստվածային մեր սպառազինությամբ զինազարդված՝ կյանքի հեղեղախոս այն զգայություններից, որ կրում ենք մեր մեջ, հավաքենք կարծրությունը և այն պահպանենք հոգեկանի մեր խորհրդարանում: Նրանցից կորովին ու զորավորն ընտրենք հանուն խոսքի ճարտարության, դնենք իմաստության մեր պարսատիկներին և ուղիղ նետմամբ ջախջախենք նրանց չար պաշտամունքի բարձր ու ամբարտավան գլուխը: Եվ իրենց իսկ ասածների չարաչար զենքերով սատակեցնենք նրանց, ավար ու գերի վերցնենք Աստծո գիտության վերաբերյալ նրանց գոռոզամիտ խորհուրդները, որոնք հավասարապես թշնամի են թե Աստծուն և թե մեզ: Նրանք չեն հավատում մեր աստվածապաշտությանը, բայց զրպարտելով բամբասում են մեզ՝ իրենց ձայնակից և համախոհ համարելով: Բայց ամենադժնդակ վտանգը, որ գալիս է նրանցից, այն է, որ խոսքով մեզ վանում են իրենցից, իսկ ձեռքով քաշում դեպի իրենց, ոսոխի պես վերքերով խոցում են սիրտը, իսկ ծածուկ ջանում մեզ միահյուսել իրենց:

Բայց նրանք հասան միայն մեր մասին ստելու, մեզ նախատինքներ և օտարոտի լուտանքներ տալու հաղթանակին: Իսկ մենք այդ երկուսից էլ այնպես ենք հեռացած, ինչպես չի կարող հաղորդություն լինել լույսի և խավարի միջև, ինչպես չեն կարող գայլերը հոժարակամ ընտանենալ գառներին: Փոքր չէ, սակայն, և այն թշնամությունը, որ նրանք իրենք են տածում իրար նկատմամբ, որովհետև յուրաքանչյուրի չարափառությունը խիստ տարբեր ու տարանջատ է միմյանցից: Քանզի նրանցից մեկն ուզում է մի, իսկ մյուսը՝ երկու ճանապարհով, որոնք հակառակ են իրար ու մոլար, հասնել աստվածային Բանի անհասանելի մարդեղությանը: Թող մինչև այստեղ այսքանը լինի:

Գրաբարից թարգմանությունը՝
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՂԱԶԻՆՅԱՆԻ

(Թարգմանությունը կատարվել է ըստ «Յովհաննու իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք» հրատարակությունից, Վենետիկ, 1953 թ. հրատարակության, էջ 46—59):